

Տիպը	Կարգ	Խմբագրությունը	Չորրորդ
Ընդունող մարմինը	Բանկի բաժնեդերերի ընդհանուր ժողով	Կարգավիճակը	Գործում է
Հաստատող ներքին իրավական ակտի տեսակը և համարը	Թիվ 1 արձանագրություն	Ընդունման վայրը	ք. Երևան
Կիրառման շրջանակը	Թիվ 4 որոշում	Ընդունման ամսաթիվը	22.06.2018թ.
	Բանկի բաժնեդերեր, Բանկի կառավարման մարմիններ, Հաշվապահական հաշվառման ստորաբաժանում, Հաճախորդների սպասարկման ստորաբաժանում	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	22.06.2018թ.
		Ուժը կորցնելու ամսաթիվը	

«Արցախբանկ» ՓԲԸ
 Բաժնետերերի ընդհանուր
 ժողովի նախագահ՝

Ա. Սելեֆյան



«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ

ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ

ԿԱՐԳ

	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Նախագիծը կազմող	Ինովացիաների, ռազմավարության և մեթոդաբանության վարչություն Գլխավոր հաշվապահ
Նախագիծը ստուգող	Իրավաբանական ստորաբաժանում Ռիսկերի կառավարման ստորաբաժանում
Նախագիծը հավանության արժանացնող	Բանկի խորհուրդ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԷԶ
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	3
3. ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ	4
4. ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ	4
5. ԿԱՐԳԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ	7

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Արցախբանկ» ՓԲԸ Շահութաբաժինների վճարման կարգը սահմանում է Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների վճարման սկզբունքները, պայմաններն ու կանոնները:

1.2 Կարգը հաստատվել է՝ հիմք ընդունելով ՀՀ, ԱՀ գործող օրենսդրությունը, մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը, Բանկի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը:

1.3 Կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Կարգը պետք է վերանայվի Բանկի գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

1.4 Կարգի նախորդ տարբերակն է Ընդհանուր ժողովի՝ 30.04.2013թ. թիվ 3 որոշմամբ հաստատված «Արցախբանկ» ՓԲԸ Շահութաբաժնային քաղաքականությունը:

1.5 Կարգը ներքին օգտագործման փաստաթուղթ է և հասանելի է Բանկի ողջ անձնակազմին: Կարգի և դրա փոփոխությունների հասանելիությունն ապահովում է Բանկի մեթոդաբանության ստորաբաժանումը՝ Տեղեկատվական համակարգում այն տեղադրելու և ծանուցելու միջոցով:

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Տերմիններ, հասկացություններ.

Բանկ՝ «Արցախբանկ» ՓԲԸ.

Կարգ՝ «Արցախբանկ» ՓԲԸ Շահութաբաժինների վճարման կարգ.

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողով կամ Ընդհանուր ժողով՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմին, որին վերապահված են օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ.

Բանկի խորհուրդ կամ Խորհուրդ՝ Բանկի կանոնադրությանը համապատասխան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին.

Շահութաբաժին` Բանկի շահույթի այն մասը, որը հատկացվում է բաժնետերերին` Բանկի կանոնադրական կապիտալում յուրաքանչյուր բաժնետիրոջ ներդրմանը (բաժնեմասին) համապատասխան.

Բանկի ներքին իրավական ակտ` Բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված և Բանկում պարտադիր բնույթ ունեցող փաստաթղթեր.

Տեղեկարվական համակարգ` Բանկի ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգ:

2.2 Հապավումներ.

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն.

ԱՀ` Արցախի Հանրապետություն:

3. ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

3.1 Կարգի նպատակն է` շահութաբաժինների վճարման կանոնների և պայմանների հստակեցման միջոցով ապահովել Բանկի կայուն զարգացման հնարավորության և Բանկի բաժնետերերի շահերի համադրումը:

3.2 Կարգի սկզբունքներն են`

- շահութաբերության այնպիսի մակարդակի ձևավորումը, որը թույլ կտա Բանկին ընդլայնել իր գործունեությունը, լինել մրցունակ և, անհրաժեշտության դեպքում, համալրել իր կապիտալը,

- Բանկի բաժնետերերի համար ընդունելի եկամուտների մակարդակի ապահովումը:

3.3 Կարգի առարկան է`

- Շահութաբաժինների վճարման կանոնները և պայմանները.
- Շահութաբաժինների վճարման սահմանափակումները.
- Շահութաբաժինների վճարման ընթացակարգը:

4. ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

4.1 **Շահութաբաժինների վճարման կանոնները և պայմանները**

1) Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ վճարվում են.

- Տարեկան կտրվածքով,

- Բանկի տարեկան արդյունքներով ստացված զուտ շահույթից` Բանկի կանոնադրությամբ նախատեսված հիմնադրամները համալրելուց հետո` Բանկի կանոնադրական հիմնադրամում բաժնետերերի ունեցած բաժնեմասին

համապատասխան: Կարգի 4.2 կետում նախատեսված սահմանափակումների բացակայության դեպքում,

- Բանկի խորհրդի՝ շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ առաջարկության հիման վրա,

- Շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման առկայության դեպքում:

2) Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից:

3) Տարեկան արդյունքներով մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահութաբաժնի չափը որոշվում է որպես հասարակ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժինների ընդհանուր գումարի և շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու օրվա դրությամբ Բանկի կողմից տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի քանակի հարաբերություն:

4) Բաժնետիրոջը վճարվող շահութաբաժինների ընդհանուր գումարը հաշվարկվում է մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահութաբաժնի չափը բաժնետիրոջը պատկանող հասարակ բաժնետոմսերի քանակով բազմապատկելու միջոցով:

4.2 Շահութաբաժինների վճարման սահմանափակումները

1) Բանկն իրավունք չունի շահութաբաժիններ վճարելու մասին որոշում կայացնել, եթե՝

- Բանկը բաժնետիրոջից հետ չի գնել բաժնետոմսերը կամ դրանց մի մասը, երբ

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,

- Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

- Շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

- Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական հիմնադրամից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կապակասի դրա չափից.

- այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

- Բանկը լրիվ չի վճարել իր կանոնադրական կապիտալը:

2) Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել Բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, եթե՝

ա) շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)

բ) շահութաբաժինների բաշխման հետևանքով Բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)

գ) Բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

4.3 Շահութաբաժինների վճարման ընթացակարգը

1) Տարվա ֆինանսական գործունեության արդյունքներից ելնելով՝ Բանկի խորհուրդը որոշում է ընդունում դիմել Ընդհանուր ժողովին՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու կամ չվճարելու առաջարկությամբ: Խորհրդի կողմից շահութաբաժիններ վճարելու առաջարկությամբ Ընդհանուր ժողովին դիմելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում Ընդհանուր ժողովին են ներկայացվում նաև վճարվելիք շահութաբաժինների չափը, վճարման ձևը և ժամկետները:

2) Բանկի խորհրդի կողմից կազմվում է նաև շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, որում ներառվում են Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ Բանկի բաժնետերերի ռեեստրում ընդգրկված բաժնետերերը:

3) Բանկի խորհրդի առաջարկության հիման վրա Ընդհանուր ժողովը որոշում է կայացնում.

- Բանկի բաժնետերերին տարեկան շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ՝ սահմանելով վճարվելիք շահութաբաժինների չափը, վճարման ձևն ու ժամկետները,

- Բանկի բաժնետերերին տարեկան շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ:

4) Որպես չբաշխված շահույթ Բանկի եկամուտների պահուստում կուտակված գումարների բաշխումն իրականացվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5) Բանկի բաժնետերերին տարեկան շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում Բանկի Հաշվապահական հաշվառման ստորաբաժանման կողմից շահութաբաժինների գումարները որոշման մեջ նշված կարգով և ժամկետում փոխանցվում են բաժնետերերի անունով Բանկում բացված բանկային հաշիվներին:

6) Բանկի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով:

7) Շահութաբաժիններ վճարելիս ոչ մի բաժնետեր վճարման ժամկետների առումով առավելություն չունի:

8) Բանկը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում է Կենտրոնական բանկին: Ծանուցման կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:

9) Կենտրոնական բանկին շահութաբաժինների վճարման մասին նախնական ծանուցման, շահութաբաժինների բաշխման արդյունքում տնտեսական նորմատիվների սահմանաչափերի հաշվարկման ընթացակարգերը և պատասխանատուները սահմանվում են Բանկի գործադիր մարմնի կողմից:

5 ԿԱՐԳԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

5.1 Կարգը կիրառվում է Ընդհանուր ժողովի, Խորհրդի, Հաշվապահական հաշվառման ստորաբաժանման կողմից:

5.2 Կարգի կիրառման նկատմամբ ընթացիկ հսկողություն են իրականացնում Խորհրդի նախագահը և Վարչության նախագահը՝ Կարգով վերապահված իրավասությունների շրջանակներում:

5.3 Կարգի կիրառման նկատմամբ ընդհանուր վերահսկողությունն իրականացնում են հսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները: